Աքսիոնները կանխիկ կը ճախուին, ինչպէս և երկրին ձեջ աշխատութեան փոխարէն կը տրուին, նճանապէս բաճ- բակի հետ կրնան փոխանակուիլ, երկրին ճողովուրդը, ճանա- ւանդ պաշտօնէութիւնն ու գորճաւարութիւնը այս ճեռնար- կին շահազրգուելու և ընկերացնելու դիտուճով:

Արտասահճանի Հայութիւնը այս կերպով ձիջոց պիտի ունենայ երկրին գորճերուն ճանօթանալու, անոր շահակից ու բաճնեկից ըլլալու, երկրին կապուելու, իր շահերը անոր շահերուն հետ նոյնացնելու: Մէկ խօսքով, Հայրենիքին ու արտասահճանի ձիջեւ կաճուրջ ճը պիտի ըլլայ այս:

ԱՄՓՈՓՈՒՄԸ

Մէկ ձիւրն քիլօ բաճբակ գնելու հաճար առնենք ներ- կայ բերքին գինը. ճիլին 2,500,000

Մանչէսթըրի ձեջ ձեկ քիլօին գորճա- ռորողէէքը, տուրքերը, զանազան ճախքերն ու պակասճը ձիասին հաշուելով ու շահն ալ վրայ բարդելով, քիլօին 2, 1/4 շիլին կը հաշուեն, այսինքն այդ տարբերութեամբ հիւսուածեղէնը կը ճախեն:

Նկատի ունենալով որ մեր առաջնակարգ գործաւորը այսօր կտունէ (օրական 8 ժամը) 3 շիլին, փոխանակ 12 շիլինի՝ (Մանչէսթըրի գործաւորին նուազագոյն աւուրչէքը)

Ընդունելով որ այժմ մեր գործաւորները անոնց չափ վարժ, և մեր կազմակերպութիւնը անոնց չափ կանոնաւոր չըլլայ:

Եւ ենթադրելով որ մեր ելեկտրակա-նութիւնն ալ ածուխէն աւելի աժան չգայ, և թէ մեր հիւսուածքն ալ անոր չափ ծախք պիտի արժէ և նոյն իսկ քիչ մըն ալ աւելի, կըր հաշուով ըսենք 2½ շիլին:

| | |
|----------------------------|-----------|
| Մէկ միլիոն քիլոյլին ծախքը, | 2,500,000 |
| Գուճար | 5,000,000 |

| | |
|---|------------------|
| Մէկ քիլոն եթէ 8 բուպլիէն կամ 10 շիլինէն ծախենք, դարձեալ Ռուսաստանի ապրանքին կէս գնովը ծախած պիտի ըլլանք, ուրեմն մէկ միլիոն հիւսուածքը 10 շիլինէն: | շիլին 10,000,000 |
|---|------------------|

Շահ 5,000,000

| | |
|---|-----------------|
| Մեքենաներու և շէնքի ամօրթիւրման պահեստի գուճար և այլ անակնկալներ զեղջելով կըր հաշուով | շիլին 1,000,000 |
| կառավարութեան բաժին շահը | 2,000,000 |
| ընկերութեան բաժին շահը | 2,000,000 |
| շահ 40 % | |

Դժուար կացութեան մէջ եմ, հակառակ ամէն կրճատումներու, այսպիսի հսկայական շահ մը ցուցնելու, վախնալով որ մեր հայրենակիցներէն ոմանք պիտի սրբողին՝ ուրիշներ պիտի հաւատան: Բայց ամէն բանէ աւելի իմ ձեռագործութիւնս եղած է նախ իրերը իրենց մերկութեամբը պարզել:

Թիֆլիսի թէ Մոսկուայի վաճառականները ինձի կը հարցունէին թէ ինչպէս կարող պիտի ըլլան գիները կտրել և քիչ շահ իւրացնել, քանի խոշոր վաճառականութիւնը կուգայ ամբողջ ապրանքը միանգամայն գնել, եթէ Մոսկուայէն նպատաւոր գտնայ զայն:

Պատասխանեցի թէ ուղղակի զիւզացիին կը ծախենք. բայց եթէ դժուարութիւնը այդ կողմէն կուգայ, այսինքն կը կարծենք թէ դժուար պիտի ըլլայ ապրանքին գինը զեղջել ու քիչ շահիւր, այդ յաջողութեան առաւելագոյն երաշխիքն է:

Այն ատեն քանի մը տարի չանցնիլը որ տասնեակ գործարաններ կըլլան Հայաստան, կը կշտացնեն Անդրկովկասեան հրապարակը ու կիչնան ծրցման մէջ, ու բնականօրէն վաճառման գիները կը զեղջուին ու շահը իւր բնականոն վիճակին կը վերածուի:

Պէտք տեսայ այս մէջբերումը ընելու, ցուցնելու համար թէ մեր Ռուսաստանի վաճառականները ոչ միայն հաւատացած են այս գործարանին յաջողութեան, այլ նոյն իսկ դժուար կը գտնան անոր շահը կրճատելը:

Ծանօթ. — Հայաստանի մէջ հազարաւոր ջուլհակներ կան որ բաճրակը գնելով ձեռքով կը ճանեն, կը գործեն եւ կտաւը կը ծախեն աւելի աժան քան գործարանէն եկածը, ապիկա ցոյց կուտայ որ երբ ելեքտրականութիւնը ըլլայ շարժիչ ոյժը, աւելի աժանի պիտի գայ ապրանքը:

Խոհեմութիւն կըլլայ առաջին տարին միայն ճանաճ հանել և մեր ջուլհակներուն ծախել յետոյ կտաւի սկսիլ, մինչև հետզհետէ բարակ ապրանքներու, ջիթի և ինի ձեռնարկել, քանզի մեր մեքենաները առաջնակարգ ջիթ ևս կը գործեն:

Սակայն միշտ աւելի ճանաճ պատրաստելու է մեր ջուլհակներուն համար ալ. քանզի մէկ գործարան մը կարող չէ ամբողջ երկրին պահանջը կշտացնել, ճանաճ ծախելով թէ շահ մը կիւրացնէ, թէ այդ արհեստաւորներուն ալ հաց մը կապահովէ, մինչև ինախաթրիին ծաղկին ու երկրին պէտքերը գոհացնելը:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յոռետեսներ չալտի ուզեն հաւատալ թէ այդպիսի գործարան ճը կարողանայ ճրցիլ Մոսկուայի գործարաններուն հետ: Ատոր բնաւ կասկածելու չէ, որովհետեւ,

ա) անոնք ալ կազմակերպութեան դազաթնակեալը չեն հասած որ նոր սկսողի ճը յաջողութիւնը տարակոյսի տակ ճնայ:

բ) Անոնք երկրին պահանջին չեն հասնիր որ ճեղ ճըրցակից նկատեն ու իրենց շահերուն դէճ գտնեն:

գ) Անոնք դրամագլուխին տարօրինակ տոկոս կը վճարեն ճինջ ճենք տղատ պիտի ըլլանք այդ ճանր բեռէն:

դ) Անոնք վառելանութիւն անհամեմատ գներով կը գործածեն, ճինջ ճենք ելեքտրականութիւն ունինք ճրի:

ե) Անոնք բաճրակը և ապա կատը փոխադրելու պէտք ունին ճինջև ճեղ հասցնելը, ճենք գերճ ենք այդ փոխադրութենէն:

զ) Ասոնց ապրանքը շատ ճեռքերէ պիտի անցնի եւ ժամանակ պիտի կորսնցունէ ճինջեւ երթալ բանուիլը ու դանալը, ճինջդեռ ճերը առաջին ճեռքէն խանութպանին պիտի ճախուի:

Նոյնիսկ եթէ այս աղբակները չարադարացնեն իրենց բնոյթը և չկարողանանք աւելի աճանի բերել ապրանքը, եթէ նոյնիսկ Մոսկուայի գնով արժէ ճեղի ապրանքը, ճիթէ դարձեալ երկրին շահը չէ այդ դրաճը ճեր աշխատատեղերուն վրայ, ճեր երկրին ճէջ ճախուել քան թէ դուրսը դրկել:

ԵԼԵԲՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գործարանին պէտք եղաճ ելեքտրականութիւնը քանի ճը հարիւր ճիւռ ոյժ է, ճինջդեռ ան ունի 5000 ճիւռ ոյժ, աւերորդը կը ճախուի Ալեքսանդրապոլ քաղաքի լուսաւորութեան, թրամվայներու և այլ ստեղծուելիք ինտիւսթրիներու և գոյացաճ արդիւնքը կուզայ շահ ճը ևս ապահովել գործարանին:

ԲԱՄԲԱԿԱՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Որպէս զի գործարանը ճշտապէս ապահով ըլլայ աճէն ճրցման դէճ պայքարելու, կառավարութիւնը հաճաճիտ է 6000 տէսիսթին հող տալու որպէս զի իրեն պէտք եղաճ բաճրակը իր սեփական հողերէն գայ, և անհամեմատ աւելի աճանի նտոի: Ատոր ճրաղիւրը առանճին կցուաճ է ներկայիս

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Կառավարութիւնը աճէն կերպ կուզէ օճտել այս առաջին ինտիւսթրին որպէս զի անպատճառ յաջողի, լուսագոյն շահը տայ, և սկզբնաւորութիւն ճը ստեղծուի հաճագորճակցութեան արտասահճանի ու երկրի ճիջ:

Անոնք որ կը կասկաճին ճայ կառավարութենէն ու անապահով կը նկատեն երկրին ճէջ դրուաճ դրաճը, ճեճապէս կը սխալին:

Հայաստանի կառավարութիւնը ունի ճեճ հեռանկարներ՝ այս ճէկ գործարանէն յետոյ, ան կը յուսայ որ պիտի կառուցուին ճէկ քանի գործարաններ ճիւլնոյն տեսակէն և երկրին պէտքերուն հասնելէ յետոյ պիտի վերագրաւեն Պարսկաստանի հրապարակներն ալ ու աճէն տարի ճիլիոններ բերեն երկրին:

Ունի բազմազան հանքեր և այլ ինտիւսթրիներ շահագորճելիք:

Ունի հարիւր հազարաւոր հէքթար բարեբեր հողեր ճը շակութեան առաջ բանալու:

Ունի հարիւրաւոր քիլօճէթր թրամվայներ բանալիք, քանի որ ելեքտրականութիւնը կայ իր պէտքերէն շատ աւելի, ունի հարիւրաւոր քիլօճէթր լաւ ճանբաներ որոնց վրայ օթօճօպիլի ընկերութիւններ կը պակսին. պէտք ունի երկաթուղին բարեփոխելու և նոր գճեր շինելու:

Վերջապէս կան ընելիք ու շինելիք անսահճան գորճեր երկրին ճէջ, որ տասնեակ ճիլիոնաւոր ոսկիներու, դրամագլխի կը կարօտին:

Միւս կողմէն մեր արտասահմանի հայութեան մէջ կան այդ բազում միլիոնները որոնց շատերը գործի մէջ դրուած շատերն ալ գործ կը փնտռեն, իսկ մեծագոյն մասը պառկած են օտար բաժնեթուղթերու կամ արժէթուղթերու վրայ, տոկոս կամ տիվիտանտ կը ստանան և օտար ինտիւսթրիները կը ծաղկեցնեն:

Հ. Խ. Կառավարութիւնը քաջ գիտէ որ եթէ մեր զրկած առաջին մէկ երկու հարիւր հազարները վտանգուին, ալ դրամ չերթար հոն, ընդհակառակը, եթէ պահպանէ, պաշտպանէ ու շահեցնէ դանոնք նոյնիսկ աւելի քան ուրիշ տեղ այն ատեն միլիոններ կը քաշէ դէպի իր երկիրը և հետզհետէ այդ գործերը ի գլուխ կը հանէ:

Հ. Խ. Կառավարութիւնը որոշած է բարձրագոյն շահեր տալ երկրին մէջ գործող զրամներուն, և ինչո՞ւ չտայ, քանի որ ամբողջ Միութեան մէջ զրամը շատ մեծ տոկոսներ կը վաստակէ, ու յետոյ, քանի որ մեզմէ շատերը իրենց գործերէն պիտի քաշեն այս գումարները յատկացնելու համար երկրին և առատութիւն ու բարիք բերելու համար բնակիչներուն, ինչո՞ւ մեզի ալ նոյնպէս օգուտ չբերէ, քանի որ մենք ալ այդ հայրենիքին բաժնեկից ենք և մենք ալ կը ծառայենք անոր բարգաւաճմանը:

Յեղափոխութեան շրջանը անցած է հիմա. ալ խաղաղութեան ու ապահովութեան շրջանն է, շինելու ու ստեղծելու ատենը եկած է, և մեր երկրին վարիչները ատոր կատարեալ գիտակցութեամբ կ'առաջնորդուին:

Մեր ճանարանը առաջին փորձը պիտի ըլլայ Հայրենիքին ու Հայ գաղութներուն զիրար հասկնալու, ըմբռնելու և գործակցելու:

ՀՈՂՈՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ասկէ առաջ բանիցս անցեկազիրներ և ծրագիրներ ներկայացուցած եմ Հայաստանի ճահիճներն ու անապատ հողերը մշակելի ընելու և մեր սրբերն ու գաղթականները հոն փոխադրելու, սեփականատէր դարձնելու, և ցոյց տուած եմ թէ հարցը լուծելու միակ եղանակը այդ է, ուրիշ ելք չկայ:

Այս առաջարկը սակայն միշտ մարդասիրական բնոյթ առաւ. և մեր բարեգործական մտքով պաշարուած ազգայիններուն խորթ եկաւ: Ինչպէս կարելի էր շահ սպասել այն բանէն որ ազգային է, և հետեւաբար պէտք է անշահախնդրական հոնգամանք ունենայ:

Միւս կողմէ զուտ արդիւնաբերութեամբ զբաղողներուն ալ վախ կազդէր, լուծուիլ այնպիսի գործի մը որ արդէն բեռնաւորուած է սրբերով ու գաղթականներով: Նաև իրենց ծաշակին չի յարմարիր այսպիսի գործ մը, յետոյ ով գիտէ թէ իր ետեւէն ինչ անակնկալներ կրնայ բաշել:

Այս անգամ կուգամ զտեղ հարցը, բաժնեւորվ զայն բարեգործական ու է նպատակէ, և դնելով զուտ գործնական հողի վրայ:

Ուսումնասիրութեանս առարկան է հողային շահագործման ընկերութիւն մը, որ պէտք է գահացում տայ ամէն առարկութեանց, բանի որ մեր հողերը շատ են, ամենուն ալ հող և աստարեզ կայ, և բանի որ այսպիսի ընկերութիւն մը կ'օժանդակէ ազգային նպատակին, տեղ և գործ բանալով մեր երկրին մէջ գաղթականներուն փոխադրութեանը անհունապէս կը նպաստէ: Միթէ գործ և շահ ստեղծելը գաղթականին երեք բաւորդ զժուարութիւնը չի հարթեր:

ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Առնենք օրինակ մը: Ուլուխանլու ճահճային հողերը որ մայրաքաղաքին մօտ են, երկաթուղին մէջտեղէն կանցնի, թէ բարեբեր են և թէ շրջապատուած խիտ բնակչութեամբ մը, ինչ որ մեծ նշանակութիւն ունի մշակութեան ու շահագործման զիւրութեան տեսակէտով:

Ասոնց երեք հազար տեսիաթինը զուտ ճահիճներ են, ասկից դատ կայ ճախճախուտ հողեր չորս հազար տեսիաթին ուռոգելի, մնացածը արդէն ճշակելի են բայց ճահիճներուն արտադրած մալարիային պատճառաւ անբնակելի ու անճշակ կը մնան: Անոր անհետացումովը քսան հազար տեսիաթին պիտի բացուի բաժնակաճշակութեան առաջ:

Այդ ճահիճները չորցնելու և ուռոգումները կանոնաւորելու համար պէտք է քառասուն հազար անգլիական ոսկի:

Կառավարութիւնը պատրաստ է կապալով տալ այս հողամասը ընկերութեան ճը ու ամէն ղիւրութիւն ընձեռել անոր:

Պայճաններուն ճէջ պէտք է լուրջ նկատողութեան առնել թէ սովիէթական սկզբունքները և թէ ընկերութեան շահերը. շահերու այսպիսի համաձայնութիւն ճը կը նպաստէ գործին յաջողութեան և տեսականութեան:

Պայճանագրութիւնը պէտք է ըլլայ վերլուիւրոյ հետեւեալ սահմաններուն ճէջ, որպէսզի երկու կողմին շահերն ալ երաշխաւորուին:

1. Ճահիճներու չորացումը ընկերութիւնը յանձն կառնէ իր ծախքովը, ի փոխարէն կառավարութիւնը կուտայ իրեն վեց հազար տեսիաթին հող 80 տարուան համար:

2. Ընկերութիւնը կը շահագործէ այդ հողը իր ընտրած եղանակովը, միմիայն աշխատաւորութիւնը պէտք է ըլլայ Հայաստանի քաղաքացի:

3. Կարելի է ճասնագէտներ կամ գործաւորներ բերել օտարներէ, բայց ոչ աւելի քան 10 աւ 100 գործաւորներու ընդհանուր թիւին:

4. Տարեկան արտադրութեան 10 աւ 100էն ոչ աւելին կառավարութիւնը կը գանձէ, ուրիշ ամէն տուրքերէ զերծ կացուցանելով ընկերութիւնը:

5. Ընկերութիւնը մինչև պայճանաժամին լրանալը կը շահագործէ այդ հողերը, պայճանաժամին լրանալուն, հողերը բնակարաններով և ճառաստաններովը կը թողու տեղւոյն վրայ հասոտուած աշխատաւորութեան, իսկ հասարակաց շէնքերը, ճեքեաններն ու ինտիւսթրիի յատկացուած հողերը կը յանձնէ պետութեան:

Այս գլխաւոր կէտերը չեն հակասեր հայկական պետութեան ներկայ շինարարական քաղաքականութեան. միայն պայճանաժամը ճահիճները չորցնելու օրէնքէն քիչ ճը դուրս կելլէ, բանզի այդ օրէնքով ճահիճը ցածրեցնողը զայն 9 տարուան համար կատանայ կառավարութեանէն, մինչդեռ ճենք 20 տարի կուզենք երկարաձգել այդ պայճանաժամը:

Ասոր ի փոխարէն ընկերութիւնն ալ փոխանակ ամբողջ հողամասը պահանջելու, անոր կէտը կամ ճէկ երրորդը միայն կը ինչորէ:

Պայճանաժամին երկարաձգումը անհրաժեշտ է ընկերութեան համար. որպէսզի ժամանակ ունենայ ամբողջութեամբ արդիւնաբերելու քառասուն հազար տեսիաթինը, որուն համար 4 տարի հարկաւոր է.— Առաջին երկու տարիները հաղարական հէքթ. և յետագայ երկու տարին ալ երկու հարական հէքթար:

Աճէն հազար հէքթարի չորս հարիւր ընտանիք անհրաժեշտ է, պէտք եղածին պէս ճշակելու, հերկելու, քաղելու համար, եթէ ամբողջ գործն անոնցմով պէտք է ընել տալ, բայց սկզբնական շրջաններուն, ամէն հազար հէքթարի վրայ հարիւր ընտանիք միայն կարելի է բնակեցնել, և դրսէն ալ գործաւորներ առնելով այդ հողերը ղիւրին և աժան կերպով կը շահագործուին: Հետեւաբար պէտք է ամէն տարի հարիւր տուն շինել և հարիւր ընտանիք աւելցնել հողերուն վրայ, մինչև երկու հազար ընտանիք ամբողջութիւնը բնակելի ընելու համար:

Վեց հարիւր գոճէշ հարկաւոր է հերկելու համար. նկատելով որ ճերացածներուն ու պակասածներուն տեղը լեցնել պէտք է. տարեկան հարիւր եզ կամ գոճէշ գնել հարկաւոր է, այսինքն ամբողջ տեւողութեան ճէջ երկու հազար հատ:

10 թրաքթէօր պէտք է խոպան հողերը հերկելու համար. բայց պէտք է հաշուել որ ամէն տարի երկու նոր թրաքթէօր պէտք է գնել հինցածներուն տեղ:

Այս յաւելումական ճախքերը ճշտական են, տարեկան եկամուտէն կը վճարուին, ու ընդհանուր ճախքերուն վրայ կիչնան, հետեւաբար ճասնաւոր ղրամագլուխ չեն պահանջելու:

ՍԿՁԲՆԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

| | | |
|---|---------------|---------------|
| 6000 տեսիլաթիւնը (հէքթար) շահագործելու համար անհրաժեշտ ծախքերը հետեւեալներն են. | | |
| 600 տուն 25էն | անգլ. ոսկի | 15.000 |
| 600 գոմէշ 10էն | » | » 6.000 |
| 10 թրքթէօր խոպան հողերը հերկելու համար 440էն | » | » 4.000 |
| Բամպակի հունարը դտելու համար մեքենայ ձը | » | » 5.000 |
| Երկրագործական գործիքներ | » | » 5.000 |
| Պաշտօնէութեան րնակարան և պիւրօ | » | » 2.000 |
| Թաղապետարան և դպրոց ձը | » | » 3.000 |
| Զանազան ծախքեր և անակնկալներ | » | » 10.000 |
| Ճահիճները չորցնելու ծախք | » | » 40.000 |
| | Գումար | 90.000 |

Այս գումարը հէքթարին 15 ոսկիի ծախք ձը կը ներկայացնէ: Ասիկա առաւելագոյն ծախքն է, քանզի առ հասարակ Եգիպտոսի մէջ խոպան հողերը ճշակելի ընելու համար հէքթարին 10 ոսկի կը հաշուեն: Տարբերութիւնը սա է որ Եգիպտոսի մէջ այս բարեբերութեամբ հող ձը գնելու համար հէքթարին 4-500 ոսկի վճարել հարկ կըլլայ, որուն սովորը 30-35 ոսկի կընէ, կամ վարձու առնելու համար նոյնքան կը վճարուի, մինչդեռ հոս ոչ այդ գինը և ոչ ալ այդ վարձքը կը վճարուի:

Յիշեալ ծախքը 4 տարուան մէջ պիտի ըլլայ, 6000 հէքթարը ճշակելի դարձնելու համար, հետեւաբար ծախքին մեծմասը գոյժին արդիւնքէն պիտի վճարուի:

Միանուագ ծախքը կամ բափիթալը որ պէտք է այս ծրագիրը իրագործելու համար, ճահիճները չորցնելու յատուկ 40 հազար անգլ. ոսկին և առաջին հազար տեսիլաթիւնը ճշակելու յատուկ 10 հազար ոսկին է, ընդամենը 50 հազար անգլ. ոսկի, ինչպէս ցոյց պիտի տամ ստորև:

Առաջին հազար հէքթարը որ կը ճշակուի, կուտայ հէքթարին 20 փութ, այսինքն 320 քիլօ, կամ ընդամենը

320 հազար զուտ բամպակ ինչ որ Հայաստանի միջին բերքն է: Յիշենք այստեղ որ Սովիէթական Հանրապետութեանց Միութիւնը երկրին բամպակամշակութիւնը բաջպերելու համար, բամպակի ներածման վրայ տուրք ձը դրած է փութին 4 ոսկի ըստպիտի կընէ քիլօին կէս շիլին:

Անցեալ աշուն, բամպակին բերքին ատենը Մոսկուայի մէջ ամերիկեան բամպակին փութը կարժէր 40 ըստպի, կամ քիլօն 5 շիլին, մինչդեռ Հայաստանի մէջ ծախուեցաւ 2½ շիլինի:

Ատոր պատճառը այն է որ մէկ ընկերութիւն ձը միայն կար բամպակ գնող դրամագրուիի նեղութեան պատճառաւ ուրիշ մրցակից չկար մէջտեղ, այնպէս որ այդ ընկերութիւնը իր գինը պարտադրեց:

Իայց եւ այնպէս, ինչպէս ցարդ հիմնուեցայ միմիայն Հայաստանի գիւղացիին բարձր եկամուտին վրայ, կը շարունակեմ մնալ նոյն սկզբունքին մէջ և հիմք կը բռնեմ գիւղացիին ստացած գինը: Հետեւաբար, քիլօն 2,50 շիլինէն, 320 հազար քիլօն կարժէ 800 հազար շիլին կամ 40 հազար անգլ. ոսկի:

Ուրեմն եթէ 50 հազար ոսկի դրամագրուի դրուի առաջին տարին և առաջին հազար հէքթարը ցանուի, 40 հազար ոսկի եկամուտ պիտի տայ, որ պիտի բաւէ մնացած ծախքերն ալ գոցելու ու 6000 հէքթարը ճշակելի դարձնելու:

Հ Ա Ս Ո Յ Թ

Հայաստանի մէջ մէկ տարի բամպակ և մէկ տարի հատիկ կամ առուոյս (հօնճա) կը ցանեն: Եթէ 3 տարին մէկ անգամ բամպակ ցանէին, ըստ ճանապարհներու ըսածին, եկամուտին վրայ աւելի արդիւնք պիտի ստանային, բայց մենք հիմնուինք միշտ ցարդ ստացուած հասոյթին վրայ:

Ինչպէս տեսանք, Արարատեան դաշտին վրայ փորձուած է որ մէկ հէքթարին վրայ բամպակը կուտայ 320 քիլօ կամ 40 անգլ. ոսկի եկամուտ. ճակնդեղը 50էն 60 թօնօ որ շաքարի գործարան գոյութիւն ունենար 50 ոսկի պիտի տար, առուոյսը 20 ոսկի և ցորենը 1600 քիլօ կամ 10 ոսկի:

Մենք Հիմք բռնելով 3 տարին ձեռն անգամ բաժարակ ցանկու զրու թիւնը և առանց բերքին վրայ յաւելում ճը նա- փատեսելու կունենանք.

| | | |
|--------------------------------------|------------|-----------|
| 2000 Հէքթար ցորենէն եկամուտ | անգլ. ոսկի | 20.000 |
| 1000 Հէքթար առուսյտ | » | » 20.000 |
| 2000 Հէքթար բաժարակէն | » | » 80.000 |
| 1000 Հէքթար ալ հանգիստ պահելու համար | » | » 00.000 |
| | » | » 120.000 |

Այս հողերը շահագործելու քանի ճը եղանակներ կան.

ա) Մեքենաներ բերել և վարձու գործաւորներով շահագործել.

բ) Գիւղացիութիւն հաստատել տեղին վրայ և գանտը վարձքով աշխատցնել որոշ պայճաններով.

գ) Գիւղացիութեան հետ արդիւնքը բաժնել.

դ) Գիւղացիութեան վարձու աւալ հողերը, տարեկան որոշ քանակութեամբ բերք կամ զրամ ստանալով.

ե) Այս ամէն եղանակներն ալ գործածել, ձարդուն և յարձարութեան հաճեմատ.

Մենք առնենք իբրեւ Հիմք նաև այժմ Հայաստանի ներկայ երկրագործութիւնը, և անոր գիւղացիութեան վարձքերը, գանկու համար այն ծախքերը զոր կը պահանջէ այս հողերուն արդիւնաբերութիւնը: Ամէն տեսակ ցանք իրեն յատուկ աշխատանքը ունի, որուն ծախքերն ալ իրարմէ կը տարբերին. հոս պէտք է բիչ ճը զժուարութիւն բաշինք գտելու այս գանազան ծախքերը որպէսզի կարողանանք արդիւնքը գանկել:

Նախ առնենք 2000 Հէքթար բաժարակի ճշակութեան ծախքերը.

| | | |
|---|------------|---------|
| 2000 Հէքթարին հերկողչէքը թէպէտ 2 ոսկի է, բայց գոճէշը ձենէ արուելուն համար պէտք է հաշուել 1 ոսկի | անգլ. ոսկի | 2.000 |
| Սերմնցու Հէքթարին 150 քիլօէն 300 թն | » | » 2.000 |
| Ակօսները բանալու վարձք | » | » 1.500 |
| Խիտ ցանուածները նօսրացնելու համար | » | » 500 |

| | | |
|--|---|--------------|
| Նորիւ ու խոտը ճաքրել | » | » 2.000 |
| Ջրելու համար | » | » 500 |
| Բաժարակը քաղել, ճաքրել, փոխադրել և հսկողութիւն | » | » 4.000 |
| Զանազանք | » | » 1.000 |
| | | <hr/> 13.500 |

| | | |
|---|--|-------------|
| Երկու հազար տեսիաթին ցորեն ցանելու համար. | | |
| Հերկողչէք և սերճողչէք | | 2.000 |
| Սերմնցու | | 2.000 |
| Խոտը ճաքրելու | | 500 |
| Ջրելու համար | | 100 |
| Հնձելու և կալսելու համար | | 1.000 |
| | | <hr/> 5.600 |

| | | |
|---|--|-------------|
| Հազար Հէքթար առուսյտ հերկելու ու ցանելու համար | | 1.000 |
| Սերմնցու երկրագործը իր արտէն կը պատրաստէ այս հունար | | 200 |
| Ջրելու համար | | 200 |
| Հնձելու եւն | | 600 |
| | | <hr/> 2.000 |

ԱՄՓՈՓՈՒՄ

| | | |
|--|--|--------------|
| 2000 տեսիաթին բաժարակին վրայ ճախք անգլ. ոսկի | | 13.500 |
| 2000 » ցորենին » » » » | | 5.600 |
| 1000 » առուսյտին » » » » | | 2.000 |
| 1000 » հանգիստի համար | | 0.000 |
| Տարեկան 100 տոն կառուցման | | 2.500 |
| » 100 եզ կամ գոճէշ գնելու անգլ. ոսկի | | 1.000 |
| » 2 թրաքթէօր գնելու » » | | 1.000 |
| 50.000 ոսկիին տոկոսը 10 առ 100 » » | | 5.000 |
| » » ամորթիսըման 10 առ 100 » » | | 5.000 |
| Տուրք կառավարութեան 10 առ 100 | | |
| ընդհ. եկամուտին վրայ որ 120.000 է » » | | 12.000 |
| | | <hr/> 47.600 |

Վարչութիւն, պաշտօնէութիւն, պիւրօի ևն. » 12.400
 60.000

Եկամուտն էր, ինչպէս վերը յիշեցինք, 120.000 ոսկի զուտ շահ կը մնայ ուրեմն 60.000 ոսկի: Կամ հէքթարի վրայ 10 ոսկի, ինչ որ կապացուցանէ այս հաշիւներուն չափաւորութիւնը:

Երբ արդիական երկրագործութիւնը Հայաստանի ճեշտուք գտնէ, ինչ որ անտարակոյս տեղի պիտի ունենայ, այն ատեն այս եկամուտը անպատճառ պիտի կրկնապատկուի. ամբողջ ճասնագէտներուն կարծիքը այս է արդէն եւ փորձերն ալ ցոյց տուած են որ ճէկ հէքթարը մինչեւ 736 քիլօ զուտ բաժակ կրնայ տար: Այն ատեն մեր բերքը տարեկան ձօտ 1,50 միլիոն քիլօ պիտի բարձրանայ, կամ ճէկ միլիոն քիլօ բաժակը ձրի պիտի մնայ ճեզի, այսինքն զուտ շահ:

Եթէ հայկական ճանարանային ընկերութիւնը ինքն յանձն առնէ այս հողերուն շահագործումը, տարեկան իրեն պէտք եղած բաժակը իր սեփական հողերէն պիտի ստանայ և փոխանակ գոյն գնելու, ձրի պիտի ունենայ իր ձեռքին տակ:

Բաժակը ձրի, վառելանիւթին տեղ ջրային ոյժը ձրի, փոխադրութեան ծանր բեռը չկայ, անվերջ միջնորդներու անպէտ շահերը չկան, երկրին ճեշտ արտադրուածը երկրին ճեշտ կը ծախուի: Ով կըսէ թէ ասկից աւելի նպաստաւոր պայմաններու ճեշտ ինտիւսթրի ճը կարելի է ստեղծել, ով կըսէ թէ այս ինտիւսթրին չի կրնար յաջողիլ, կամ ճրցուճը կը կարողանայ գալ գոյն քանդել:

Հայկական ճանարանային ընկերութիւնը կրնայ իր դրամազլխին վրայ 50 հազար ոսկի աւելցնելով թէ մին և թէ միւսը ի դուռն հանել, այնպէս որ 3—4 տարի յետոյ կարող է ալ իր սեփական բաժակովը ֆապրիքան դարձնել. այն ատեն իր շրջանառութեան դրամազլուխը կարելի է ետ դարձնել կամ ուրիշ ճարտարարուեստի ճը յատկացնել:

Ե. ԿԱՐԻԿԵԱՆ

ՇԱՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԼԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հարկ չկայ կանգ առնելու այն տվեալների վրայ, վորոնք ցույց են տալիս, թէ վոր աստիճան նպաստավոր ազդեցութիւն ունի շաքարի ճակնդեղի արտադրութիւնը այնտեղ, ուր այդ բույսի ճշակումը կատարելապէս հնարավոր է հողի և կլիմայական պայմանների շնորհիվ: Այդ տվեալները հանրածանօթ են: Հանրածանօթ է նաև շաքարի բնախտական դերը մարդու սննդառութեան գործում, ինչպէս և այն օգուտը, վոր տալիս են անասնաբուծութեան և դաշտերի ճշակութեան գործում շաքարի ճակնդեղի արտադրութեան թափթիւղները:

Ուստի ապացուցելու համար, վոր Հայաստանում ցանկալի է շաքարի ճակնդեղի արտադրութեան կազմակերպումը, հարկավոր է միայն առաջ բերել այն տվեալներն ու նկատաւորութիւնները, վորոնք կարող են, անտեսական տեսակէտից, ցույց տալ այդ արտադրութեան կազմակերպման նպատակահարմարութիւնը Հայաստանում ընդհանրապէս և նրա կազմակերպման հնարավորութիւնը—Արագոյան կալվածքի ներկա բնական պատմական պայմաններում ճանապարհաւոր:

ՇԱՔԱՐԻ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԼԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի աշխարհագրական դիրքը, այսինքն նրա հարեանութիւնը Պարսկաստանի և Թուրքիայի հետ առանձնապէս նպաստավոր պայմաններ է ներկայացնում այն երկրում շաքարի ճակնդեղի արտադրութիւն կազմակերպելու համար: Եթէ այդ արդիւնագործութիւնը մի քանի տարուց յետոյ այնքան զարգանայ Հայաստանում, վոր նրա բնակչութեան ամբողջ պահանջը բավարարելուց հետո երկրում ավելցուկ մնայ, այդ ավելցուկը հեշտութեամբ կարող է ծախու հանվել Պարսկաստան և Թուրքիայ, ուր շաքարի պահանջը մեծ է: Համաշխարհային պատերազմից առաջ վերջին տարիների ընթացքում այդ երկրներից իւրաքանչիւրն արտահանում էր միմիայն Թուսաստանից ավելի քան 8 միլիոն վութ:

շաքար: Չպէտք է անուշաղիթ թողնել նաև այն հանգա-
մանքը, վոր վրաստանն ու Արրբեջանը նույնպես բավական
խոշոր շուկաներ են հանդիսանում Հայաստանի շաքարն
սպառելու համար:

Այսքանս վաճառքի ծափն: Իսկ ինչ վերաբերում է ար-
տադրութեանը, Հայաստանում իբրև տնտեսական նպաստա-
վոր գործն հանդիսանում է ձի կողմից բանվոր ձեռքերի
առատութիւնը և ձիւս կողմից այն հանգամանքը, վոր բնակ-
չութիւնն այնտեղ գրազվում է երկրագործական աշխատան-
քով և ընդունակ է իւրացնելու նոր շահավետ հշակույթ-
ներ-օրինակ բաժապիւղ-ձի բան վոր թույլ է տալիս հուսարու,
թէ շաքարի ձակնդեղի ճշակույթն արագորեն ճուսք կը
գործի գիւղացիական տնտեսութեան ճէջ:

**ԱՐԱՋԴԱՅԱՆ ԿԱԼՎԱԾՔԸ ՇԱՔԱՐԷ ՃԱԿՆԻԵՂԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱՆԻ Է**

Կովկասի նախկին Արային Վարչութեան հրատարակած
աշխատութեան ճէջ, վոր կրում է «Երեսնեան նահանգի
Արագրայան տախաստանի հողային, ջրաբանական և երկրա-
բուսաբանական հետազոտութիւնները» խորագրերը գիւղա-
տնտես-հողագետ Ռոմանովն ասում է Արագրայանի հողն
ըստինքեան տեղ չի թողում լավագույնը ցանկալու:

Դիտելով այդ հողն իր տեղում և ծանոթանալով նույն
աշխատութեան ճէջ առաջ բերված տվեաներին, վոր վերա-
բերում են Արագրայան կալվածքի սահմաններում գտնված
հողի գոնազան տեսակետների ձեքանիքական և քիմիական
տարրալուծմանը, ես չեմ կարող համաձիտ չլինել այդ բնույ-
թագրին, բայց ձիւսն այն տեսակետից, թէ վոր աստիճան
նրանք գնահատելի են, իբրև շաքարի ձակնդեղի ճշակույթի
համար պիտանի հողեր:

Իր ձեխանիքական և քիմիական կազմութեամբ Արագ-
րայանի հողը, արդարև, տեղ չի թողում լավագույնը ցան-
կալու:

Ճիշդ է, նրանում կան աղային և ճահճային տեղեր,
բայց այդ տեղերի թէ աղային և թէ ճահճային հատկու-
թիւնը շնորհիվ ձի կողմից Արագրայան կալվածքի տեղա-

գրութեան և ձիւս կողմից նույն կալվածքի ամբողջ տարա-
ծութեան վրա գտնված հողաշերտի բնույթի կարելի է վե-
րացնել համապատասխան ձիջոցներ ձեռք առնելով:

Այսպէս ուրիմն Արագրայան կալվածքում շաքարի
ձակնդեղի արտադրութեան համար անպիտք վտուգելի հո-
ղեր, կարելի է ասել, չկան, բացի թերևս ձի քանի փոքրիկ
հողամտերից Արաքսի ավազուտների ճոտ:

Սակայն տարօրինակ կը լինէր, վոր Արագրայանի պէս
ձի ահագին տարածութեան վրայ չգտնվէր շաքարի ձակն-
դեղի ճշակույթի համար անպիտք և վոչ ձի կտոր հող:

Վերջին չորս տարիների ընթացքում, երբ այլ կալված-
քում վոչ ձիւսն վոչ ձի տնտեսութիւն չի ձեռնարկվել, այլ
և նա ենթարկվել է նույն իսկ կատարեալ տւերումի, նրա
հողի աղային ու ճահճային հատկանիշը ձի քիշ շեշաված
բնույթ է ստացել, սակայն այս երեսույթը կարող է բոլորու-
վին վերացվել, թէ կարգի դրվի վտուգման ջրաբեր ու ջրա-
տար ցանցը և եթէ վերականգնվի կանոնավոր ջրաբեր տըն-
տեսութիւնը, շինելու արենաժներ:

Այս երեսույթը վերացնելու համար կատարվելիք աշ-
խատանքները, որոնք ամենախոշորն են լինելու ըստ իրենց
արժեքի և անհետաձգելիութեան, պէտք է լինեն հետեւեալ-
ները. պիտք է շինել զրեւոժ. պիտք է նորոգել գոյութիւն
ունեցող ջրաբաշխ ցանցը և շինել լրացուցիչ ցանց իր դերը
կատարած վտուգող ջրի համար և պէտք է նորոգել Արաքսի
հեղեղումներից կալվածքը պաշտպանող ամբարգակը:

Իսկ այսպէս կոչուած-Կախանովի-գլխաւոր ջրանցքի
ձաքրումն ու նորոգումը կարելի է թողնել երկրորդ հերթին,
վորովհետեւ նույն իսկ այն դրութեամբ, վորի ճէջ այդ
ջրանցքը գտնվում է այժմ, ահագին քանակութեամբ ջուր է
տալիս:

Ես այստեղ առաջ չեմ բերի Արագրայան կալվածքի
հողի տեսակների նկարագրութիւնը, նձանսպես և այդ հո-
ղերի ձեխանիքական տարրալուծման տվեաները, ինչպէս
նաև վտուգող ջրի և տեղատարած ջրերի վերլուծութիւնը.
այդ բոլոր տեղեկութիւնները լիովին տրված են վերոհիշեալ
գեղեցիկ աշխատութեան ճէջ:

Արագղայանը գտնվում է Երևանի և Նախիջևանի միջև, և վորքան թույլ են տալիս դատելու այդ տեղերի օդերեւույթաբանական կայանների ավեաները, նրա կլիման ևս վուողման պարագային, պէտք է դասվի շաքարի ձակնդեղի ձշակույթի համար նպաստավոր կլիմաների շարքը:

Այստեղ հնարավոր է նրա վաղ սերմանումն -մարտի վերջը և ապրիլի սկիզբը- և, շնորհիվ այդ հանգամանքի, տարվա ամենատաք ժամանակաշրջանը հուլիս և օգոստոս կը գուգաղիլի հենց այն ժամանակաշրջանին, երբ ձակնդեղը լցվում է շաքարանիւթով, այսինքն ձակնդեղի զարգացման հենց այն ժամանակաշրջանին, երբ ցանկալի է բույսի մեծագույն ույժ:

ՇԱՔԱՐԻ ԾԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴԻՒՆՔԸ ԱՐԱՋԴԱՅԱՆՈՒՄ

Քէ վորքան մեծ կը լինի ձակնդեղի բերքն Արագղայանում և շաքարի քանի տոկոս կարելի է ստանալ նրանից ես, ի հարկէ, չեմ կարող վորոշակի ասել, առանց հասուկ փորձ արած լինելու: Բորչալուի գավառի ստորին ջրարբի մասում, Խրամ գետի հովտում, վորի կլիմայական և հողային պայմանները շատ մոտիկ են Արագղայանի նույնաման պայմաններին, ես արել եմ ձակնդեղի ձշակույթի փորձեր, վորոնց հիման վրա եւ կարելի է վստահորէն ասել, վոր Արագղայանում բերքը մեծ կը լինի եւ շաքարի տոկոսը բարձր:

Իմ կատարած փորձի հետեւանքն այն էր որ, վոր մի դեսեստինից ստացվել էր մոտ վեց հազար փութ (հարիւր թօն) ձակնդեղ քսաներկու տոկոս շաքարանիւթով:

Այս փորձի ավեաները գերազանցեցին իմ բոլոր սպասումներից, վորովհետեւ նույն իսկ այն երկրներում, ուր ամենից աւելի զարգացած է շաքարի ձակնդեղի կուլտուրան, օրինակ Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, շատ քիչ է պատահում, վոր այդ բույսի բերքը մի դեսեստինից հասնի 3 հազար փութի, (50 թօն) այլ սովորաբար լինում է մոտ 2 հազար փութ պարունակելով իր մէջ 19—20 տոկոս շաքար:

Իսկ Ռուսաստանում հազիվ է յաջողվում մի դեսեստինից ստանալ հազար փութից աւելի ձակնդեղ մոտավորապես նույնքան տոկոս շաքարանիւթ պարունակող:

Ես բնավ տրամադիր չեմ հիշեալ փորձի ավեաների հիման վրա վորեւէ ծրագիր կազմել մի խաշոր գործի համար եւ ոչ մի տարակույս չի կարող լինել, վոր մեծ տարածութեան վրա ձակնդեղի ձշակույթի սկզբնական շրջանում անկարելի կըլինի նրա վերաբերմամբ ունենալ այն ինամքը, վոր տրվում էր կես դեսեստին տարածութեան վրա եղած ձակնդեղին:

Բայց եւ այնպես այս փորձը թույլ է տալիս պնդել, վոր ձակնդեղի բերքը Արագղայանում կարելի է ապահովված համարել:

Անթաղերով, թէ շաքարի գործարան սյին արտադրութիւնը հավասար կըլինի 15% —իսկապես նա աւելի շատ կըլինի—, կարելի է հաստատապես ասել, վոր Արագղայանում մի դեսեստինից կարելի է ստանալ վուց պակաս քան երեք հարիւր փութ (5 թօ) շաքար: Իսկ ստարդէն շաքարի գործի մի հրաշալի հետեւանք է ներկայումս գոյութիւն ունեցող պայմաններում:

ՇԱՔԱՐԻ ԾԱԿՆԴԵՂԻ ՁԵՌԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Շաքարի ձակնդեղի ձեռնարկութիւնը կազմակերպելու համար առաջին իսկ տարին պիտի արվին հետեւեան ծախքերը:

- 1.— Իաշտային տնտեսութեան համար կենդանի և մեռած ինվենտար մեռք բերելու 250,000 ո.
 - 2.— Մի տարվայ ընթացքում դաշտային տնտեսութիւն վարելու համար 500,000 »
 - 3.— Անհրաժեշտ բնակարաններ և այլ շէնքեր կառուցանելու համար 100,000 »
 - 4.— Գործարանի շէնքը կառուցելու և ջուր մատակարարելու համար 500,000 »
 - 5.— Բոլոր մեքենաները, գործիքները, գործարանում դնելու և տեղում նորոգելու համար 1,000,000 »
 - 6.— ձակնդեղի առաջին բերքը ձշակելու համար 450,000 »
 - 7.— Վարչական, տեխնիքական, գրասենեակային և այլ ծառայողներին պահելու և կազմակերպչական ծախքերի համար 200,000 »
- Ընդամէնը 3,000,000 »

Այս գուճարները հաշվված են մոտավորապես ժամանակակից գներով վերածված ռուսական նախկին վոսկո ռուբլու արժեքի:

Ծախքերի այս համառոտակի ցուցակից երևում է, վոր մոտ մի միլիոն ռուբլի պահանջվելու է ընթացիկ ծախքերը կատարելու և մոտ երկու միլիոն միանվագ ծախքերի համար:

Ձեռնարկութեան արտադրութիւնները վաճառելուց, նրա էազմակերպումից հետո առաջին տարում, ընդհանուր մուտք կը լինի մօտ 1,600,000 վոսկի ռուբլի եթէ շաքարի փութը ծախվի 4 ռուբլի վոսկով:

Այս թվերի համադրութիւնը ցույց է տալիս, թէ շաքարի ճակնդեղի ձեռնարկութիւնը անսեսական անսակեացի վորպիսի առողջ գործ է հանդիսանում:

Այստեղ անհրաժեշտ եմ համարում նկատել, թէ քանի վոր Արազդայան կալվածքի ամբողջ տարածութիւնից, նրա կանոնավոր շահագործման պարագայում, կարելի է ստանալ մոտ 4,000,000 փութ շաքարի ճակնդեղ, գործարանի շենքը պետք է կառուցել մի անգամից այնպիսի հաշվով, վոր նրա մէջ առանց հետագա վերակառուցումների, ըստ նախապէս ճշակված հատակագծի, կարելի լինի դնել բոլոր ձեքենաներն ու գործիքները, տարեկան 600 հազար փութ շաքար արտադրելու համար:

Սկզբում, երբ շաքարի ճակնդեղի ճշակույթը դեռ մուտք չի գործել գիւղացիական անտեսութեան մէջ, ենթադրվում է ձեքենաներ դնել տարեկան 300 հազար փութ շաքար արտադրելու համար՝ ընդ ոմին գործարանը սարքված պիտի լինի այնպես, վոր բաց թողնի ինչպես շաքարավազ, այնպես և ռաֆինադ. բայց մինչև վոր շուկայի պայմանները չպահանջեն ռաֆինադը կը պատրաստվի վոչ թէ գլուխներով, այլ կտորներով:

ԱՐԱՉԴԱՅԱՆՈՒՄ ԾԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾԻ ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արազդայանում շաքարի ճակնդեղի ձեռնարկութիւնը իրականացնելու համար միակ, բայց լուրջ դժուարութիւնը կարող է հարուցել վառելանիւթը: Շաքարի գործարանը խոշոր քանակութեամբ վառելանիւթ է պահանջում, ուստի

վորպեսզի վերջինս չճանրանայ պատրաստ մթերքի վրա իբրև վերադիր մեծ ծախք, ցանկալի է, վոր նա կարելոյն չափ էջման նստի: Արազդայանի շուրջն այնքան քիչ փայտ կա և այդ փայտն էլ այնքան թանկ է, վոր հնարավորութիւն չկա օգտագործելու այն իբրև վառելանիւթ գործարանի համար:

Արազդայանը հետազոտելիս ինժեներ Ետ. Ս. Մնացականեանը հազորդից ինձ վոր Արազդայանից 25 վերստ հեռաւորութեան վրա Խոտրովա գիւղի մոտերքը կան քարածուխի հանքեր: Ես ուրիշ տեղեկութիւններ չունիմ այդ ամխահանքերի մասին այսինքն նրանց բնույթի, ծախվի, նրանց տված ամուխի ջերմունակութեան մասին և այն տեղեկութիւններ, վորոնք անհրաժեշտ են այդ ամուխից օգտվելու հնարավորութեան խնդիրը լուծելու համար:

Նկատի ունենալով, վոր Հայաստանում էջման ու լաւ վառելանիւթ չկա, այդ ամխահանքերի մասին եղած բոլոր տվեալների մշակումը, շաքարի ճակնդեղի արտադրութեան խնդրից դուրս ևս, չափազանց հետաքրքրական է, ուստի և այդ հանքերը, ամենայն հավանականութեամբ, շուտով քաղմակողմանի կերպով կը հետազոտվեն կառավարութեան կարգադրութեամբ:

Եթէ այդ հետազոտութիւնը նպաստավոր հետեւանքներ տա, այն ժամանակ Արազդայանում շաքարի ճակնդեղի արտադրութեան իրականացման դեմ տեղական բնույթ ունեցող վոչ մի խոչընդոտ չի հարուցվի:

Քաղուածք. Ինժեներ ՊԵՏՐՈՎ:

Ց Ի Մ Ե Ն Դ

Քաղուածք երկրաչափ Պ. Արագանի տեղեկագրէն:
«Ինչ կարող է ընել Յիմենդի արտադրութիւնը և Հայաստանի մէջ գործարան մը հիմնելը»:
Աշխարհային պատերազմը որ ծագեցաւ 1914ին, ինչպէս նաև անոր յաջորդող յեղափոխական շրջանը, պատճառը եղան կարեւոր յեղաշրջումներու և մեծ փոփոխու-

թիւներու, ծարերու հին կայսրութեան մէջ ապրող զանազան ժողովուրդներուն տնտեսական և քաղաքական կեանքին մէջ:

Մէկ կողմէ ժողովուրդներու ազգային զգացումը մեծ զարթնում ճը ունեցաւ և միւս կողմէ տնտեսական նոր պայմանները, ըլլայ ներքին կամ արտաքին, արծարծեցին նոր խնդիրներ և ի յայտ բերին մինչեւ այդ ատեն գոյութիւն չունեցող նպատակներ: Ստեղծագրութեան այն շրջանին մէջ զոր կանցնինք, ստիպողական է մեզ համար նպատաւոր կերպով լուծել մի քանի խնդիրներ, որոնցմէ կախում ունի մեր ապագան, ինչպէս նաև մեր երկրին բարգաւաճումը: Ներկայ տեղեկագրով ինձ թոյլ կուտամ մեր կառավարութեան ուշադրութիւնը հրակրել Քօրտլանտի Յիմնդի արդիւնաբերութեան վրայ Հայաստանի մէջ, որ կարող է բոլոր երկրին տնտեսական վիճակը բարելաւել:

Յիմնդը, որ շինութեան հարկաւոր ամենազլխաւոր նիւթերէն մին է, ընդարձակ արդիւնաբերութեան ճը կրնայ տեղի տալ, գործ հայթայթելով հազարաւոր աշխատաւորներու: Այս ինտիւսթրին նոյնիսկ չափանիշը կրնայ համարուիլ քաղաքակրթութեան և բարեկենցաղութեան բարձր մակարդակի ճը: Սովիէթական կառավարութեան կողմէ պատրաստուած արդիւնաբերական աշխատանքներու յայտագիրը, որոշ ապացոյցներ կը պարունակէ թէ պատրաստ է օժանդակել ի նպաստ տնտեսական և քաղաքական բարգաւաճման Երվանեան հոն նահանգին, զոր ծարական կառավարութիւնը կանգիտանար: Ապացոյց նաև ընդարձակ աշխատանքներու ձեռնարկութիւնը ինչպէս ջրաբաշխութիւն. ելքտրականացում, քաղաքներու մէջ զանազան շինութիւններ, զոր կը տեսնենք նոր հանրապետութեան կեանքին մէջ: Եթէ հնարին չէ այս ծրագիրները լիօրէն և շուտով իրագործել, պատճառը անիշխանութեան տարիներու գործած աւերներն են: Մեր երկրին մէջ Յիմնդի չգոյութիւնը, ինչպէս նաև այս նիւթին սգութիւնը, մեր բոլոր գործունէութեան զխաւոր խոչընդոտներէն մին եղած է, ի շարս այլոց:

Յիմնդը մեզի համար ստիպողական պահանջ: մըն է, ջրաբաշխական աշխատութեանց, ելքտրական և զանազան տեսակ ջր-թեքնիքական շինութեանց, մեր ճամբաներուն,

երկաթուղիներուն և վերջապէս մեր քաղաքներուն համար: Կամուրջներ, պատեր, պամակէշներ, և այլն ցիմենտով կը շինուին:

Որով Հայաստան Յիմնդի շատ կը կարօտի, քանզի այս ըլլալիք նորագութեանց զխաւոր նիւթն է:

Երկաթուղիներու վիճակը աւելի փայլուն չէ:

Նմանապէս ներկայ բնակարանի քրիզին մէջ. ցիմենդը շատ օգտակար կրնայ ըլլալ հաստատուն և ածան բնակարաններու կառուցման համար, քաղաքի տուններուն 3)4 եթէ ոչ աւելին, շինուած են արժիլի խառնուրդով և տափարակ հողային տանիքներով և կխաւաշ գերաններով:

Տեղական կամ օտար փայտեղէնը խիստ սուղ է: Եթէ Ամերիկայի մէջ ամէն բան շինուած է երկաթեղէնով ու (պէղծուարմէով) պատուհան, դուռ ևն. հրդեհներէ պատպարտելու համար պէտք է որ մենք ալ նմանապէս շինենք գոնէ տախտակածաները, ցեղունները երկաթածած նիւթերով, այս տեսակ շինութիւնները ոչ մէկ ատեն փայտէ աւելի սուղ կուգան: Գարով տանիքին, մեզմէ որը արդեօք անձրեւ տեղացած ատեն անհանգիստ չէ եղած: Անձրեւը տանիքէն ներս կը կաթի և վախի մէջ են որ գուցէ չի փլի:

Յիմնդով զիւրին պիտի ըլլար տանիքի շինութեան համար հիանալի նիւթ մը պատրաստել որպէսն են երկաթեայ տանիքները երկար ժամանակէ ի վեր նորոգուած չըլլալով կարելի է զանոնք փոխարինել կղմիւտով, որ աւելի թեթեւ և հաստատուն է:

Մեր վերև ըսածներէն կը տեսնուի թէ որ աստիճան Յիմնդը մեզի համար արդիւնաւետ է որպէս շէնքի նիւթ: Արդէն պատերազմէն առաջ թէ Ռուսիոյ մէջ և թէ մեր երկրը, Յիմնդի պահանջքը զգալի դարձած էր: Ստորև ցիմենդի արտալրութեան մասին մի քանի սթատիսթիքներ կուտանք: 1906ին պաշտօնապէս արձանագրուած էին ցիմենդի 26 գործարաններ, մինչև 3,700,000 տակառ արտալրողականութեամբ: Պատերազմի տարին, այսինքն 1914ին, 58 գործարաններ արդէն կը գործէին, 27,500,000 տակառ ցիմենդի տարեկան արտալրողականութեամբ, այս թիւին

աւելցնել պէտք է նաև արտասահմանէն ներմուծուած 22,500 տակառ ցիմենդը:

Կովկասի շրջանին մէջ ճիւղին, 1) գործարաններ կա-
յին, տարեկան 500 հազար տակառի արտադրութեամբ:

Որպէսզի չը թողունք որ Հայաստանը աղքատ և հե-
տաձեռաց գաւառ ճը մնայ, հարկաւոր է երկրին մէջ զըտ-
նուող բոլոր արդիւնաբերութիւնները վերականգնել. և հնա-
րաւոր դարձնել քաղաքացիներուն, ի սպաս լինել իրենց զի-
տութիւնը ու եռանդը, մեր նորածին հանրապետութեան, որ
վերականգնացած է Սովիէթներուն շնորհիւ, անտեսական
և քաղաքական դարաւոր անգործունէութիւնէ մը:

Ինչ թոյլ կուտամ մեր կառավարութեան ուշադրու-
թիւնը հրաւիրել Հայաստանի մէջ, ի շարս ալյոս (Portland)
ցիմենդի արտադրութեան վրայ, հետեւեալ պատճառներով:

1.— Հայկական ցիմենդը երբ վաճառուի ածան գնով
շինարար բոլոր արդիւնաբերութեանց վերականգնումին կը
նպաստէ:

2.— Բնակչութեան մէկ որոշ մասը, շինարար գործի
մը ի սպաս, կրնայ իւր ոյժերը յատկացնել. ու այս կերպով
անգործութեան վտանգն ալ անհետացած կըլլայ:

3.— Ցիմենդի գործարան մը հաստատելով, Հայաստան
ձեռք կը ձգէ նիւթ մը որուն պահանջքը բոլոր երկիրներու
մէջ պիտի աւելնայ:

4.— Ինչպէս որ պիտի տեսնուի, ցիմենդի արտադրու-
թիւնը Հայաստանի մէջ աւելի ածան պիտի գայ, տրուած
ըլտով բնական նպաստաւոր պայմանները:

5.— Ենթադրելով որ արտադրութեան գինը հաւասար
ըլայ ուրիշ տեղերու գիներուն, այս նիւթին փոխադրութեան
ծախքը խնայած պիտի ըլլանք, ինչ որ աւելի կարևոր է
քան յիմարդի գինը:

6.— Երկրին մէջ ցիմենդ ունենալով, մեր երկաթու-
ղիներուն պիտի խնայենք այս նիւթին փոխադրութիւնը:

Աշխարհիս մէջ գտնուող 700 գործարաններէն ըստ
վերջին սթաթիսթիքներուն շատ քիչեր ճիւղին կը գտնուին
նոյնքան նպաստաւոր պայմաններու տակ:

Ինչպէս որ կը վկայեն հայկական հողին վրայ կա-
տարուած շատ մը գիւտական հետազոտութիւնները, Հայաս-
տանի մէջ գոյութիւն ունին կարևոր քարահանքեր որոնք
կը պարունակեն շատ լաւ տեսակէ ցիմենդաքար: Տեղեկագիր
պատրաստուած էին այս իմաստով Փրոֆ. Զապոցբի, ՊՊ. Ա-
ղապո սպի, Տէր Գարաբեղովի, Կանեպարեանի, Իրահամալիֆի
և ուրիշներու կողմէ: Նմոյշները հաւարուած են զանազան տե-
ղերէ հետազոտութեան համար և ի յայտ կը բերեն յարմար
տարրերու գոյութիւնը լաւ տեսակէ ցիմենդ պատրաստելու
համար:

ՖՐԻԲՐԻԽԿՐՈՒՊՊ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿ.

ՄԱԿՏԵՐՈՒՐԳ ԲՈՒԿԱՌԻ

ՂԱԶԱՒԻ ՇՐՋԱՆԻ ԻՋԵՒԱՆ ԳԵՈՒՂԻ ՄՈՏ

ԳՏՆՈՒԱՄ ՑԵՄԵՆՏԱՆԱՔԻ ՄԱՍԻՆ

Բրեզիլսկիի և Մաճիկոնյանի վիճագրաքարի շահա-
գործման ընկերությունից (Սանկո-Պետրոբուրգ) մենք ստա-
ցանք Մարտի 24ին 1922 թ. չորս նմոյշ հետազոտելու հա-
մար նրանց պիտանիությունը վորպէս հաւմ նյութի փորտ-
լանտ ցեմենտ պատրաստելու համար:

Նմուշները զատվեցին համաձայն իրենց արտաքին
տեսքի և ստացան հետեւեալ համարները. (1)

Այդ տվյալները անկասկածելի կերպով ցույց են տալիս
վոր հետազոտության համար ուղարկված նմուշներից կա-
րելի է պատրաստել ցեմենտ մանաքարձր տեսակի, նախա-
պատրաստելով համապատասխան խառնուրդ:

ՖՐԻՏՐԻԽ ԿՐՈՒՊՊ

ՄԱԿՏԵՐՈՒՐԳ ԲՈՒԿԱՌԻ

Վերոհիշյալ հանքերը շահագործելու համար 1911
թվին կազմվել էր մի անոնիմ ընկերություն, վորի սպազ-
րած հայտագրից քաղում յենք հետեվյալ տվյալները.

(1) Մանոթ. Ասոնց զասաւորումներն ու անալիզները
առանձին հաստի մէջ ամփոփուած են, հետաքրքրողներուն
կրնանք զայն արամադրել: Ե. Կ.

1) Ընկերութիւնը ձտաղիր եր կառուցանել Իջեվան (Քարվանսարայ) գյուղի մոտ մի ցեմենտի գործարան 500,000-600,000 տակառ, մէկ տակառը 150 քիւօ ուր-տաղրողականությամբ, նախահաշիւից յերեւում է վոր մի այդ-պիսի գործարան պիտի արժենար 1,028,246 ռուբլի վսակով:

Գործարանում պահանջվող բոլոր մեքենայական աշ-խատանքները պիտի կատարվեն ելքերականութեան միջոցով:

Ելքերական եներգիան պիտի ստացվեր Ակստաֆինկա գետի ջրի ոյժով: Հինց Իջեվան գյուղի մոտ, անցկացնելով մի ջրանցք մի վերստ երկարութեամբ, կարելի է զարգացնել ինչպես յերեւում է տպագրած հայտագրից 3000 միւռ ույժի եներգիա:

Հայտագրից նույնպես յերեւում է, վոր վառելիք պիտի հայթայթեն մոտակա շրջակայքը գտնվող ընդարձակ ան-տառները:

2) Ընկերութիւնը ձտաղիր եր նույնպես կառուցանել 40 վերստ յերկարություն ունեցող մի երկաթուղագիծ մին-չեւ Ակստաֆա կայանը: Գիծը պիտի արժենար 600,000 ռուբլի:

3) Ընկերության հայտագրից յերեւում է վար նրա դրածագուլեւը պիտի լիներ 2,500,000 ու վորը պիտի գործադրվեր հետեւյալ կերպով.

| | | | |
|--------------------------------------|-----------|-----------|-----------|
| ա) Գործարանի կառուցումը | 1,028,246 | ու. | 1,028,246 |
| բ) 40 վերստ երկթղ. շինութեան | » | 600,000 | |
| գ) Շրջանառութեան համար | » | 400,000 | |
| դ) Միջնորդներին, հիմնարկներ յեվ այլն | » | 471,754 | |
| Գումար է | » | 2,500,000 | |

Ըստ յայտագրի բովանդակութեան, մէկ տակառ ցե-մենտը, ի նկատի ունենալով վերոհիշյալ 2,500,000 ուր-բլու տոկոսը, ամորտիզացիան յեվ այլ բոլոր ծախսերը պիտի արժենար գործարանից 40 վերստ հեռավորության վրա գտնվող Ակստաֆա կայանում 2 ուրբլի 6 կոպեկ:

Իջեւան (Քարվանսարայ) կը գտնուի Սեւանայ շրջանը. Ատրպէյճանի և Վրաստանի սահմաններուն մոտ, կեղղոնն է Անդրկովկասեան Արեւտրական բաշխման:

Շոսէ ճամբայ ունի, մինչեւ Սեվանայ բերանը ելէ...

նովգեա 60 քիւօմէթր, մինչեւ Գարաքիլիսէ 80 և մինչեւ Երեւան 120 քիւօմէթր:

Ըստ շինութիւնք սիմենթի գործարան մը կը պարենաւորէ ամբողջ անդրկովկասը. Աղսթաֆայի վրայօք թէ Ատրպէյ-ճանի և թէ Վրաստանին կը մատակարարէ: Գարաքիլիսէի ճամբով դիւրաւ կը հայթայթէ սիմենթը Բաճպակ Լօրիի շրջանը մինչև Աղէքսանդրաբոլ, և Սեւանայ ճամբով կը կշտացնէ ամբողջ Երեւանեան նահանգը:

Այսօր ինչպէս կը տեսնուի Հայաստանի սիմենթը 3000 քիւօմէթր երկաթուղով կուգայ, պարիը (150 քիւօն) կարժէ մեզ 11 ռուպլի, ինչ որ կընէ թօնը 7 անգլ. ոսկի նոյն դրութեան մէջն է նաև Վրաստանն ու Ատրպէյճանը:

Մենք սիմենթը արտադրելով 2,06 ուրպլիի պիտի կա-րողանանք Անդրկովկասի ո և է մէկ քաղաքը 2 անգլ. ոսկիի ապրանք ընել թօնը, փոխանակ 7 ոսկիի:

Հոս նպատակը ճանրակրկիտ ծրագիր մը ներկայացնել չէ, այլ այս գործարանին վրայ վերիվերոյ գաղափար մը տալ է. ասոր համար ինչպէս ըսինք թէքնիկական ճանրա-կրկիտ ուսումնասիրուած ծրագիր կայ, հետաքրքրուողները կարող են անոր ծանօթանալ նմանապէս այն ընկերութիւնը որ գործի պիտի ձեռնարկէ, հարկաւ իւր մասնագէտները պիտի խրկէ տեղւոյն վրայ իրերը ստուգելու:

Ուրեմն մենք որոշ չափով այս գործին վրայ հասա-րակութիւնը լուսաբանելու համար կը վերցնենք հետեւեալ կըր հաշիւները:

| | | | |
|---|-------------------------------|---------------------|-----------|
| Մէկ տարուայ արտադրութիւնը | 600,000 տակառ կամ 100,000 թօն | 2 ոսկիէն անգլ. ոսկի | 200,000 |
| Եթէ զայն ծախենք այսօրուան սի-մենթին կէս գնովը, այսինքն թօնը | 3 ½ | » | » 350,000 |
| Շահ | » | » | 150,000 |
| Ամօրթիւրման, պահեստի գումար տուրքեր և ծախքեր | » | » | 50,000 |
| Զուտ շահ | » | » | 100,000 |
| Կամ մէկ միլիոն ռուպլի, և կամ 40 %: | | | |

Ոչինչ կայ տարօրինակ այս շահերուն մէջը երբ կա-
ռավարութիւնը ձրի կուտայ անոր տեղը, հանքն ու ան-
տառը, ամէն նպաստաւոր պայմանները հասկանալի է ալ
որ այս առաւելութիւններուն գուժարը պէտք է զիճացը
համահաւասար արդիւնք մը, շահ մը տայ:

Երբ տարիներու ընթացքին մէջ բնականոն վիճակը
հաստատուի, երբ Կովկասի մէջ այլ գործարաններ հաս-
տատուին, նկատելով այս գործարանին կեդրոնական ղրբը,
և նպաստաւոր պայմանները, նկատելով երկրի զարգացման
հետ սիմէնթի պահանջին ալ պարբերաբար յաւելուծը, այս
գործարանը միշտ պիտի մնայ Անդրկովկասի մատակարարող
աղբիւրը, և ամէն պատեհութիւն ունի որ քան զոր յաւա-
ջանալու:

Ջ Ա Ն Ա Ջ Ա Ն Ք

Հայաստան հանքային տեսակետով դեռ կատարելապէս
չէ քննուած. շատ հանքեր կան, որոնց ոչ տարողութիւնը,
ո՛չ ալ անալիզը քննուած են: Մեզի ծանօթները արդէն շա-
հագործութեան մէջ եղածներն են միայն: Ասոնցմէ յիշենք
հետեւեալները.—

ԿԱՊԱՐԱՍՒՍԻՆ ԱՐՄԱԹ

Կիւմիւշլիք և Կիւմիւշլիանէ գիւղերու մօտերը կա-
պարխառն արծաթի հանքեր կան, զոր մեր նախնիքը շա-
հագործեր են մասամբ, և այդ գիւղերը հանքերուն անու-
նովը կը կոչուին, սակայն ներկայ արդիւնաբերական տե-
սակետով անոնց հարստութեան և քանակութեան մասին
դեռ լուրջ ուսումնասիրութիւն չէ եղած:

ՓԻՐԻՅԹ Pyrithe

Այս հանքերը շատ են և հարուստ, առ այժմ հան-
քածուն Պագու կը ղրկեն, ուր կը գտուին, ծծմբաթթու-
ածինն (acide sulfurique) և մաս մըն ալ պղինձ % 2
մինչև 3 համեմատութեամբ:

Երբ ասոր գտարանը Հայաստանի մէջ շինուի, հոն
քիմիական ճարտարարուեստը պիտի ծաղկեցնէ, արդէն ծրա-

գիր մը կայ երկրին մէջ աղբուրակը, engrais chimique
պատրաստելու, որուն այնքան պէտք ունի Անդրկովկասի
երկրագործութիւնը:

Ա Պ Ա Կ Ի

Ապակիի շատ հանքեր կան, բայց Գարաքիլիսէի մօ-
տերը, երկաթուղագծին վրայ գործարան մը կը տիրէ ամե-
նուն, նկատելով որ ասոր յարմար ամենաընտիր աւազն ու
այլ նիւթերը ունի, ինչպէս նաև վառելափայտն ու փոխա-
զրուծեան ղիւրութիւնները, նկատելով որ Երեւանի, Լենի-
նականի և Թիֆլիսի մէջտեղը ըլլալով, այդ հրապարակները
իրեն յաճախորդ կ'ըլլան:

Ջ Ր Վ Է Ժ Ն Ե Ր

Մեր գետերը կէս միլիոն ձիու ուժ ելեքտրականութիւն
արտադրող ջրվէժներ ունին որոնցմէ 5 հազար և 6 հազար
ձիու ուժ արդէն շինուելու վրայ են, Երեւան և Լենինա-
կան:

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

Արդէն գոյութիւն ունեցող երկաթուղին վերանորոգու-
թեան կարօտ է, և շարժուն գոյքերու անսահման պէտք
ունի: Ալեաթ և Ճուլֆայ գծին աւարտուծը պիտի բանայ
մեզի Կասպից ծովը և Ճուլֆայ-Թապրիզ գծին երկարա-
ձգուծը պիտի բանայ Հնդկաստանի ճամբան դէպի Սև ծով,
որ 50 % պիտի մօտեցնէ Հնդկաստանը Ասգլիոյ: Հայաս-
տանը թրանզիթի կեդրոն մը պիտի ըլլայ Արևելքի և Արև-
մուտքի մէջ:

Թ Ր Ա Մ Վ Ա Յ

Երեւանէն Էջմիածին 20 բլլօմէթր և Երեւան-Գամար-
լու շրջան 40 բլլօմէթր թրամվայի գիծերը անհրաժեշտ
դարձած են, տեղը դաշտային և շուէ ճամբաներ ունի: 5
հազար ձիու ուժ ելեքտրական գորութիւն ալ տրամադրելի
կայ այդ գիծերուն:

Վեց հարիւր վերսթ շուէ ճամբաներ կան որ գաւառ-
ները իրար կապած են, օթօպիւսներու և քաղաքի օթօմօպիւ-
սներու ընկերութիւն մը կրնայ շատ յաջող գործեր ընել,
մասնաւորապէս Երեւան-Տիլիճան գիծ մը կրնայ այս վերջ-
նոյն անտառները շահագործելի ընել:

ԽԱՇՆԱՐԱԾՈՒԹԻՒՆ

Երկիրը ճօտ ճէկ ճիլլոն տեսլաթին առօտալայրեր ունենալով, խաշնարածութեան ամենանպաստաւոր պայմաններ կը ճատակարարէ, դեռ կենդանիները բազմացնելու և ազնուացնելու բաւական խնամք չէ տրուած. սովորական ոչխար ճը ճէկ քիլօ ճաքրուած բուրդ կուտայ: Մօտ ապագայի ճէջ քանի ճը ճիլլոն քիլօ բուրդ պիտի ունենանք տարեկան արտածութեան ցանկին ճէջ:

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հայաստանը ինչպէս ըսինք, բուրդի երկիրը ըլլալէն յետոյ, ճին բնական գոյներու երկիրն է ճիայնգամայն. իր լեռներն ու դաշտերը կ'արտադրեն այն կեղեւներն ու արճատները որ առենօք գորգերու հաստատուն գոյները կուտային:

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Հայաստանը շերամբուծութեան առաջնակարգ յարճարութիւնները կը ճատուցանէ: Նախ՝ թթնին շատ արագ կ'աճի հոն, երկրորդ՝ կլիճան դով կընէ, տաքութեան առախճանը ճինչև Յունիս, սանթիլրատը 18° ճանցիլը:

Երկիրը շրջապատուած է ճիւղապատ լեռներէ, որ աճէն կողճէ փչած օդն ալ ճիւղներու գովութիւնը իր հետ բերելով, հիւսիսին ազդեցութիւնը կընէ սրտերուն շնչառութեան, հակառակ գիւղացիներու նախնական շերամբուծութեան, 28 կրամնոց ճէկ տուփէն սովորաբար 80 քիլօ խոզակ կ'առնեն:

ՎԱՃՎՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստան կ'արտաճէ առ հասարակ բաճպակ, բուրդ, ճետաքս և ներածութեան պէտք ունի տճէն տեսակ ճեքեւաններու և գորճիքներու:

Արտաքին վաճառականութեան հաճար պէտք է առևտրական պետական ճօնօփօլէն արտօնութիւն ստանալ, ճինչդեռ ներքին վաճառականութիւնը, ամբողջ Սովիէթ Միութեան ճէջ ազատ է և ապահով:

Յ Ա Ն Կ

| | |
|--------------------------------------|----|
| 1. Տեղեկագիր առ Սղգ. Պտտուիրակութիւն | 5 |
| 2. Յոյսին վերադարճը | 15 |
| 3. Մամուլ | 18 |
| 4. Պղնճահանքերը | 21 |
| 5. Բաճրակի ճանարան ի Հայաստան | 28 |
| 6. Հողային ընկերութիւն ճը | 43 |
| 7. Շաքարի արտադրութիւնը Հայաստանում | 51 |
| 8. Յիճենդ | 57 |
| 9. Զանազանք | 64 |



« Ազգային գրադարան



NL0309041

